

Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

մարդուն
դժբախտութեան
սկիզբը



Written by: Edward Hughes

Illustrated by: Byron Unger; Lazarus

Adapted by: M. Maillot; Tammy S.

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

www.M1914.org


©2011 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.



Աստուած ստեղծեց ամեն ինչ:
Երբ Աստուած ստեղծեց առաջին
մարդը, Ադամը, որ ապրեցաւ Եդեմի
պարտեզին մէջ իր կնոջ Եւայի հետ:
Երկուքը ուրախ կ'ապրէին եւ կը

հնազանդէին Աստուծոյ
եւ անոր ներկայութիւնը կը
վայելէին մինչեւ
օր մը:






"Երբեք Աստուած
ըսա՛ւ ձեզի որ ամեն
ծառէ չուտէ՛ք",
հարցուց օձը Եւային:
"Կրնաք ուտել ամեն
ծառէ բացի մէկ ծառէ",
ըսաւ Եւա: Եթէ ուտէք
կամ դպնաք այդ
պտուղին պիտի
մեռնիք: "Չէ՛ք մեռնի՛ր"
ըսաւ խաբէբայ օձը:





"Աստուծոյ նման
կը դառնաք": Եւա
ուզեց այդ ծառին
պտուղը, լսեց
օձին խօսքերը եւ
կերաւ այդ
պտուղը:



Աստուծոյ անհնազանդելէ ետք
Եւա Ադամն ալ առաջնորդեց,
որ ուտէ այդ պտուղէն, Ադամ
պէտք է ըսեր հետեւեալը. "Ոչ,
ես անհնազանդութիւն չեմ
ըներ Աստուծոյ
խօսքին":





Երբ Ադամ
եւ Եւա մեղք գործեցին,
երկուքն ալ գիտակցեցան, որ մերկ էին:
Թուզի ծառի տերեւներով շորեր հիւսեցին
իւրգիւնքնին ծածկելու համար եւ թուփերուն
մէջ պահուտեցան Աստուծոյ ներկայութենէն:




Երեկոյեան զով օդին Աստուած եկաւ
պարտեզ: Ան գիտեր, թէ ինչ ըրեր էին
Ադամն ու Եւան, Ադամ մեղադրեց
Եւան: Եւան ալ մեղադրեց օճը:
Աստուած ըսաւ. "Օճը անիծեալ
է, կինը ցաւերով պիտի
ծննդաբերէ իր
զաւակները":



"Ադամ, քանի որ մեղք
գործեցիր, աշխարհը անիծեալ
է փուշերով: Պիտի յոգնիս եւ
քրտնիս, որպէսզի առօրեայ
ուտելիքդ ապահովես":





Աստուած Եդեմի
պարտեզէն դուրս
դրաւ Ադամը եւ Եւան,
որովհետեւ մեղք
գործեցին, անոնք
անջատուեցան
կեանք տուող
Աստուծմէն:





Աստուած բոցէ սուրեր ստեղծեց
դուրս ձգելու համար Ադամը եւ
Եւան: Աստուած մորդէ
հագուստներ շինեց
Ադամին եւ Եւային:
Ուրկէ՞ Աստուած
առաւ այդ
մորդերը:





Ժամանակի ընթացքին Ադամ եւ Եւան ընտանիք
կազմեցին: Իրենց առաջին որդին Կայէն,
պարտիզպան էր, իրենց երկրորդ որդին՝ Աբել,
հովիւ
էր:



Օրին մեկը Կայենը Աստուծոյ կանաչեղեններ իբրև
նուէր բերաւ, Աբելն ալ իր ամենալաւ ոչխարները
իբր նուէր բերաւ Աստուծոյ: Աստուած Աբելի նուէրէն
գոհ
մնաց:



Աստուած դժգոհ մնաց Կայենի
նուէրէն, Կայէն շատ գայրացաւ,
բայց Աստուած ըսաւ անոր. "Եթէ
ճիշդը ընես կը կարծես որ պիտի
չընդունուի"¹:




Կայենի զայրոյթը սաստկացաւ:
Ժամանակ մը ետք դաշտին մէջ
Աբելի վրայ յարձակեցաւ եւ
մեռցուց զայն:



Աստուած խօսեցաւ Կայենի ըսելով. "Ո՞րք է եղբայրդ
Աբելը": "Չեմ գիտեր", պատասխանեց Կայեն սուտ
խօսելով : "Արդեօք ես ե՞մ իմ եղբօրս հոգատարը":
Աստուած պատժեց Կայենը առնելով
անկէ պարտիզպանութեան
հմտութիւնը զայն
թափառական դարձնելով:



Կայենը Աստուծոյ ներկայութենէն
հեռացաւ եւ ամուսնացաւ Ադամի եւ
Եւայի աղջիկներէն մէկու մը հետ եւ
ընտանիք կազմեց անոր հետ:



Շուտով Կայենի թռռները եւ անոր
թռռներուն որդիները բազմացան
եւ իր հիմնած քաղաքը լեցուցին:



Մինչ այդ Ադամի եւ Եւայի
ընտանիքը արագօրէն բազմացաւ:
Այդ օրերուն մարդիկ շատ աւելի
երկար կ'ապրէին քան մեր օրերը:



Երբ իր տղան Սեթը ծնաւ Եւան ըսաւ.
"Աստուած ինձի տուաւ Սեթը Աբելի
տեղ": Սեթը Աստուածապախի մարդ էր,
որ ապրեցաւ 912 տարիներ եւ ծնաւ
բազմաթիւ որդիներ:




Աշխարհի մէջ ժողովուրդը դարձաւ
աւելի չար սերունդէ սերունդ
չարութիւնը եւ գեշութիւնը
շատցան. վերջապէս Աստուած
որոշեց բնաջինջ ընել
մարդկութիւնը եւ...



... Ամեն անասունները եւ
թռչունները Աստուած զղջաց, որ
ստեղծեց մարդը: Սակայն մէկ
մարդ Աստուծոյ գոհ պահեց:



Այս մարդը Նոյն էր. Սեթի
սերունդէն Նոյը աստուածազախ
եւ անյանդիմանելի մարդ էր: Ան
Աստուծոյ հետ քալեց:



Ան նաեւ իր երեք որդիներուն
սորվեցուց, որ հնազանդին Աստուծոյ:
Յիմա Աստուած որոշեց, որ Նոյը
գործածէ շատ տարօրինակ
եւ բացարձիկ ձեւով:



մարդուն դժբախտութեան սկիզբը

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ծննդոց 3 - 6

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք գինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք Ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի Խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

